963

1. Հիսո՛ւս իմ, Փրկի՛չ իմ,
Մեկը չկա Քեզ նման,
Փառք եմ տալիս ամբողջ սրտով,
Որ կյանքն իմ Քո շնորհքով ես լցրել:
Իմ ամրոցն ես, զորությունն ես,
Դու Տերն ես ամբողջ իմ կյանքի,
Թող որ սիրտն իմ և ողջ կյանքն իմ
Քեզ փառավորի հավիտյան:
Գոչիր և երգիր, ողջ աշխարհ, Բարձրյալին,
Փառք և պատիվ թող լինի Արքային,
Ծովեր թող գոչեն, և ծառեր թող խոնարհվեն
Մեր Տիրոջ անվան առջև:
Սիրտն իմ երգում է, Արքա՛, Քեզ համար,
Ուրախությունն ես կյանքիս, իմ ընկերը,
Ոչ մի կարիք ես չունեմ, երբ ունեմ Քեզ, Տե՛ր:

2. Հիսո՛ւս իմ, Փրկի՛չ իմ,
Մեկը չկա Քեզ նման,
Ի՜մ Աստված, մեծարում եմ ես Քեզ
Քո սքանչելի գործերի համար:
Կենդանի ես, Բարձրյալ ես,
Քո մեջ է հանգիստն իմ հավետ,
Սիրում ես Դու ինձ, սիրում եմ ես Քեզ,
Գահիդ առջև եմ բարձրացնում փառքեր:
Ցնծա՛, ողջ երկիր, Հիսուսին մեծարի՛ր,
Ողջ փառքն ու պատիվը Արքային դու տո՛ւր,
Լեռները իջնեն և ծովերը երգեն,
Հիսուսի անվանը ծնրադրեն:
Ամբողջ էությամբ մեծարում եմ Քեզ,
Առջևդ կանգնած եմ, գալիս եմ դեպ Քեզ.
Քո խաղաղությունը և սերն է իմ մեջ հիմա: